ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **Սեյրան Զավենի Գրիգորյան**
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Սամվել Պարգևի Մուրադյան**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արմեն Ավանեսի Ավանեսյան
բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. հունիսի 25-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 52^{ա}, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վանո Սիրադեղյանը եղել է 1970-80-ական թվականների ամենահետաքրքրական, ամենաքննարկված և ճանաչված հեղինակներից մեկը: Սկսած գրական առաջին հրապարակումներից՝ նրա ստեղծագործությունները եղել են գրաքննադատության ուշադրության կենտրոնում: Սակայն պետք է նշել, որ հեղինակի ստեղծագործության ուսումնասիրությունը հիմնականում մնացել է այդ նույն 1970-80-ական թվականների մակարդակում և ներկայացնում է հեղինակի՝գրական մամուլում հրապարակված առաջին գրվածքները և առաջին երկու ժողովածուները՝ «Կիրակի» և «Ծանր լույս»: Սիրադեղյանի ստեղծագործության մի զգալի մասը դուրս է մնացել գրականագիտական պատշաճ ուսումնասիրությունից:

Պետք է նշել, որ մերօրյա ընթերցողը բավականին հետաքրքրված է Վանո Սիրադեղյանի ստեղծագործություններով: Դրա մասին փաստում են Սիրադեղյանի գրչին պատկանող ժողովածուների հրատարակությունները 2000-ականներին, վերջին տարիներին լույս տեսած և հեղինակի ողջ գեղարվեստական արձակը ընդգրկող «Դուռը» ժողովածուի պարբերական վերահրատարակությունները, ինչպես նաև ընթերցողների կողմից Սիրադեղյանի հրապարակախոսության հաճախակի վերհիշումները: Հետևաբար ժամանակակից ընթերցողի հետաքրքրությունը բավարարելու, սիրադեղյանական արձակը, նաև հրապարակախոսությունը առավել դյուրընկալելի դարձնելու համար անհրաժեշտ է նյութի ժամանակակից ուսումնասիրություն, որը հնարավորություն կտա նոր հայացքով դիտելու Սիրադեղյանի արձակը, չափածո և հրապարակախոսական բնույթի ստեղծագործությունները՝ այդպիսով հաղորդակից լինելու 1980-ական թվականների գրականությանը: Սիրադեղյանն իր գրականության դիտակետում է պահում «փոքր մարդուն», նրա ներքին բախումներն ու հարցադրումները, որոնք շատ ժամանակ բախվում են պատի, երբեմն՝ տրամաբանական պատասխաններ ստանում: Իսկ մերօրյա ընթերցողն ունի բազում հարցեր, որոնց պատասխաններն էլ փորձում է գտնել այդ գրականության մեջ:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել 1970-80-ական թվականների հայ գրականության տաղանդավոր և ինքնատիպ հեղինակներից մեկի՝ Վանո Սիրադեղյանի գեղարվեստական արձակն ու հրապարակախոսությունը, ցույց տալ նրա ստեղծագործության տեղն ու կարևորությունը հայ գրականության պատմության մեջ: Աշխատանքում առաջ քաշված որոշ խնդիրներին անդրադարձներ եղել են, սակայն դրանք եղել են սեղմ, հակիրճ, հաճախ՝ ակնարկումների մակարդակում: Դրանք կատարվել են 1980-90-ական թվականներին, եղել են սեղմ հոդվածներ, փոքրիկ գրախոսություններ, և կարևոր խնդիրները առանձին ու խորը վերլուծության չեն ենթարկվել: Աշխատանքի հիմնական նպատակն է ցույց տալ հեղինակի գրվածքների, նրա հերոսների ստեղծագործական տրամաբանությունն ու զարգացումը, ինչպես

նաև այդ ստեղծագործության հերոսներ դարձած «փոքր մարդու» վարքագիծը և գործունեությունը պայմանավորող ներհոգեկան ու արտաքին ազդակները, հերոսների վարքը, սոցիալական և հոգեբանական գործոններով պայմանավորված առանձնահատկությունները և այլն:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը
2. Քննության ենթարկել հեղինակի ստեղծագործության վերաբերյալ գրված հոդվածներն ու աշխատանքները
3. Կատարել հեղինակի ստեղծագործության վերլուծություն՝ ելնելով ձևի և բովանդակության համապատասխանության հիմնական սկզբունքից
4. Բնութագրել հեղինակի երկերի գեղագիտական առանձնահատկությունները, հստակեցնել նրա տեղը հայ գրականության մեջ
5. Վերլուծել հեղինակի հրապարակախոսությունը
6. Քննել հեղինակի կողմից օգտագործված լեզվաոճական արտահայտչամիջոցներն ու գնահատել դրանց իրացումը

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Սիրադեղյանի գրականության ուսումնասիրությունը սկսվել է 1978-ից, երբ մամուլում լույս տեսան հեղինակի առաջին պատմվածքները: Սակայն այդ ուսումնասիրությունը մնաց հենց նախորդ դարավերջում՝ այդպես էլ ձեռք չներելով խոր և համապարփակ բնույթ: Ընդհանուր առմամբ թեմային վերաբերող որոշ փոքր խնդիրներ ներկայացվել են առանձին գիտական-գրական հոդվածներում, որոնք սեղմ են և հակիրճ:

Ուշագրավ են հատկապես Ազատ Եղիազարյանի, Զավեն Ավետիսյանի, Ֆելիքս Մելոյանի, Պետրոս Դեմիրճյանի հոդվածները, որոնց, ինչպես նաև այլ հեղինակների կողմից գրված հոդվածներին հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել:

Աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքը Վանո Սիրադեղյանի ողջ գրական ժառանգության խորը վերլուծությունն է, որին համակարգված գիտական անդրադարձ երբևէ չի կատարվել, եթե հաշվի չառնենք 1980-90-ական թվականներին հրապարակված որոշ հակիրճ հոդվածներ: Սույն ուսումնասիրությամբ Վանո Սիրադեղյանի գեղարվեստական և հրապարակախոսական ժառանգությունը առաջին անգամ վերլուծվում է ամբողջությամբ: Քննադատության կողմից ժամանակին մատնանշված առանձին հատկանիշները լրացվում են, ցույց է տրվում հեղինակի գեղարվեստական մտածողությունը հնարավոր բոլոր կողմերով և մանրամասներով:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսության թեմատիկ ընդգրկումը հնարավորություն է տալիս խնդիրն ուսումնասիրել վերլուծական, համեմատական, պատմական մեթոդներով:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի ընտրությունը, ցույց է տրվել նյութի մշակվածության աստիճանը, ներկայացվել արդիականությունն ու գործնական նշանակությունը, առանձնացվել են ատենախոսության նպատակն ու խնդիրները, տեսական-մեթոդական հիմքերը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄՈՒՏՔՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Առաջին գլուխը կազմված է երեք ենթագլխից՝ «Բանաստեղծական փորձերը», «Առաջին պատմվածքները և գրողական հայտը» և ««Կիրակի» ժողովածուն որպես ստեղծագործական հանգրվան»: Դրանցում ուսումնասիրվում է հեղինակի ստեղծագործական առաջին շրջանը, որը բավականաչափ բեղուն է: Վանո Սիրադեղյանի արձակ առաջին ստեղծագործությունները հրապարակվեցին 1970-ականների վերջին: «Գարուն» ամսագրի 1978 թվականի 8-րդ համարում Սիրադեղյանը ընթերցողին ներկայացրեց միանգամից երկու պատմվածք՝ «Տղամարդու խիղճը» և «Թերեզի երջանկությունը»: Նա այդ ժամանակ արդեն փոքրիշատե հայտնի էր ընթերցողին. դեռևս 1972 թվականին «Գարուն» ամսագրի առաջին համարում լույս էին տեսել սկսնակ հեղինակի չորս բանաստեղծությունները: Այդ չափածո գործերում արդեն ուրվագծվում էր հեղինակի ձեռագիրը: Բայց Սիրադեղյանն ակնհայտորեն շատ ավելի մեծ հավակնություն կարող էր ունենալ արձակում՝ հաշվի առնելով նրա բանաստեղծությունների պատկերային համակարգը, բառապաշարն ու ոճը, ինչպես նաև հստակորեն ընդգծվող պատումայնությունը:

Բանաստեղծական այդ եզակի նմուշները թույլ չեն տալիս անել առավել հեռագնա եզրակացություններ, հատկապես այն հարցում, թե որքանով էր նա մտածողական այլ կողմերով կապված գրական նոր սերնդի հետ: Ակնհայտ է, որ թեմատիկ «համերաշխությամբ» հանդերձ՝ Սիրադեղյանի տեքստն ավելի շատ էր հակված պատումայնության, և դա թերևս բանաստեղծությունից հեռանալու և սեփական պատմություններն արձակի ժանրային տարածության մեջ ամրագրելու գլխավոր պատճառներից մեկն էր:

Բանաստեղծական մուտքից հետո Վանո Սիրադեղյանը երկար է սպասել տալիս, նախքան նորից կհայտնվի գրական ասպարեզում: Նա գրականություն է մտնում բոլորովին հասուն վիճակում՝ այլևս ազատված երիտասարդական փորձարարություններից: Սիրադեղյանի մուտքը արձակի ասպարեզ միանգամայն ամուր է և շիտակ: Նա առաջին հրապարակումներից հետո կարողանում է ուշադրություն սևեռել իր վրա, և չեն ուշանում գրականագիտական առաջին կարծիքները:

1978 թվականին «Գարուն» ամսագրում լույս տեսան նրա երկու պատմվածքները՝ «Տղամարդու խիղճը» և «Թերեզի երջանկությունը»: Մասնավորապես երկրորդը սկսնակ գրողի համար կարելի էր համարել ստացված: Համենայն դեպս, մեր գրականության մեջ, մասնավորապես արձակում, քիչ թվով հեղինակներ են նման հաջողված քայլով սկսել իրենց ընթացքը: «Թերեզի երջանկությունը» պատմվածքի ամենից առանձնացող հատկանիշը գրողի դիպուկ հայացքն է, պատկերի ճշգրտությունը, որով հեղինակը հստակորեն կարողանում է ցույց տալ իր ժամանակը, այդ ժամանակի բոլոր խնդրահարույց կողմերը: Սիրադեղյանի մյուս ստեղծագործությունները ևս աչքի են ընկնում կենցաղային պատկերներով, բայց դրանցով հատկապես հագեցած այս պատմվածքը չպետք է շփոթել կենցաղագրության հետ, որովհետև հեղինակը կարողանում է թափանցել շատ ավելի խոր և շատ ավելի կարևոր հարցադրումներ կատարել՝ հիմնականում դրանք քողարկելով տողատակերում: Սիրադեղյանի այս ֆենոմենի վերաբերյալ հետագայում կարևոր արձանագրում կատարեց ժամանակի ամենաակտիվ քննադատներից մեկը՝ Ազատ Եղիազարյանը, Սիրադեղյանի «Կիրակի» ժողովածուի առիթով գրված գրախոսության մեջ, որին անդրադարձել ենք հետազոտության ընթացքում: Եղիազարյանը խոսում է հեղինակի թեմատիկ նախընտրությունների մասին. «Նա սիրում և կարողանում է պատկերել կենցաղը, դրա անհրապույր կողմերը, մանրուքները, թեև նրա գրածը ոչ մի կապ չունի կենցաղագրության հետ»[1]:

Սիրադեղյանի առաջին՝ «Կիրակի» ժողովածուն լույս տեսավ գրական-գնահատողական համատեքստում: Այն հիմնականում ամփոփում էր մամուլում հրապարակված պատմվածքները և մի քանի նոր գործեր: Ծանոթ պատմվածքներն այստեղ երևում էին նոր լույսի տակ, որովհետև Սիրադեղյանը ստեղծել էր նոր համակարգ, որտեղ արդեն ծանոթ կերպարները, նրանց գոյության ու դրսևորումի կերպը առավել ընդհանրացված էին ներկայացնում գրողի ստեղծագործական միտումները:

«Կիրակի» ժողովածուն ինչ-որ չափով պայմանավորում է 1980-ականների գրական ընթացքի ճանապարհը, առաջ բերում գեղարվեստական նոր որակներ, արտացոլում է իրականությունն ու կերտում կերպարային նոր ոճ ու հայեցակարգ: Սա հեղինակի հերթական խիզախումն է մարդու և ժամանակի, մարդու և տարածության նոր փոխհարաբերությունների պատկերման առումով: Սա իրապես հաջողված նորամուտի գիրք է, որը թե՛ բովանդակային ընդգրկման, թե՛ հաջողության, թե՛ խոստացած շարունակության առումով հնարավոր է համեմատել Հրանտ Մաթևոսյանի առաջին գրքի՝ «Օգոստոսի» հետ:

---

[1] **Եղիազարյան Ա**., Պատմություններ ծանոթ մարդկանց մասին, «Սովետական գրականություն», 1984, թիվ 6, էջ 134:

Պետք է նկատել, որ հեղինակն այս գրքով առաջ է բերում հետաքրքիր նորարարություն, որը պայմանավորված էր նրա հայացքի մեկնակետով, թարմությամբ և անսովորությամբ: Հայ ընթերցողն այդ ժամանակ արդեն բավականին փորձառու էր, արդեն ծանոթ էր ճշմարիտ, ռեալիստական ու դիպուկ արձակին, որը ստեղծել էր Հրանտ Մաթևոսյանը: Իսկ ի՞նչն էր, որ ընթերցողին տպավորեց այս անգամ: Նոր հեղինակն առաջ բերեց լրիվ նոր հայացք, մարդու հոգեբանությունն ու նրա հոգու և մտածումների գաղտնի անկյունները տեղափոխող արձակ, որը սենտիմենտալ և պաթետիկ չէր, կենդանի էր և անմիջական:

«Վերջին տարիների «Առաջին գրքերի» մեջ նկատելիորեն առանձնանում է Վանո Սիրադեղյանի «Կիրակին»,– գրում է գրականագետ Պետրոս Դեմիրճյանը:– Այս հեղինակն արդեն հանդես է բերում գրողական հասունություն, պատկերվող նյութի նկատմամբ ազատություն ու տիրապետություն, հոգեբանական վերլուծությունների հմտություն: Բայց ամենակարևորը, որ շահեկանորեն առանձնացնում է նրա գիրքը մյուսներից, հարցադրումների սոցիալական պայմանավորվածությունն է: Վ. Սիրադեղյանը քիչ տեղ է հատկացնում հերոսների քնարական զեղումներին, գեղեցկախոսությանն ու հոգեկան տվայտանքների նկարագրություններին: Նրա հերոսները բացվում են այս կամ այն բնորոշ իրադրության կամ վիճակի մեջ, որոնց կենտրոնում գրեթե միշտ առկա է ապրելու հոգսը»[2] :

«Կիրակին» պարզապես ընտրանի կամ գիրք չէ, որը պարունակում է հեղինակի տարբեր ստեղծագործություններ, այլ ժողովածու է՝ հստակ ընտրված պատմվածքներով և այդ պատմվածքների կոնցեպտուալ-ներտեքստային կապերով:

Այսպիսով՝ Վանո Սիրադեղյանի «Կիրակի» ժողովածուն առաջին և չափազանց վստահ քայլն էր դեպի մեծ գրականություն, դեպի ուր էլ գնում է հեղինակը՝ առավել վարպետանալով, մեծացնելով իր կուտակած ներուժը, ինչին մենք ականատես ենք լինում հետագայում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՅՈՒՂԸ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ գլուխը կազմված է երեք ենթագլխից՝ «1970-80-ական թվականների հայ արձակի թեմատիկ ուղղությունները և Վանո Սիրադեղյանի պատմվածքները», «Գյուղը և գյուղի մարդիկ Վանո Սիրադեղյանի արձակում. բնությունը և հոգեբանությունը» և «Բնությունը իբրև գործոն Սիրադեղյանի

---

[2] **Դեմիրճյան Պ.**, Ժամանակը և գրականության զարգացումը, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 210:

արձակում»: Այդ գլխում քննվում է Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը 1970-80-ական թվականների հայ արձակի համատեքստում: Քննությունը հաճախ կատարվում է զուգահեռ վերլուծության ձևով՝ հեղինակի գործերը համեմատելով այդ թվականների ուրիշ արձակագիրների ստեղծագործությունների հետ:

1970-80-ական թվականների հայ արձակը թեմատիկ առումով թերևս ամենաբազմազանն է: Մի կողմից՝ շարունակվում էին քարոզչական և այլ նպատակներով անդրադարձները քաղաքային կյանքին, ուրբանիզացման խնդիրներին, գործարաններում ծնվող ու մեռնող սիրավեպերին, խորհրդային ընտանիքներում իշխող բարոյական նորմերին ու բարքերին, մյուս կողմից՝ գրողների մի խումբ փորձում էր արձակ ներբերել քիչ քննարկված կամ բոլորովին նոր թեմաներ՝ խնդիրները դիտարկելով որոշակի քննադատական տեսանկյունից:

Այս առումով, անշուշտ, հայ արձակը հանգամանքների բերումով տարբերվելու էր խորհրդային արձակից՝ ազգային ճակատագրի և հասարակական խնդիրների յուրահատկությունները հաշվի առնելով: Ամեն դեպքում խորհրդային ընդհանրական բազմաթիվ իրողություններ յուրովի էին բեկվում հայ ժողովրդի կյանքում և հասարակական իրողություններում:

Բնականաբար, այս երևույթները նախ և առաջ արտացոլվում էին 1970-80-ական թվականներին ասպարեզ մտած նոր արձակագիրների ստեղծագործություններում, թեպետ հարկ է նշել, որ նախընթաց շրջանը բազմաթիվ հենքեր դրա համար, այնուամենայնիվ, ստեղծել էր: Եթե 1960-ականներին որոշ թեմաներ ու խնդիրներ արծարծվում էին որոշակի զգուշավորությամբ, ապա 1970-80-ականներին նույն այդ խնդիրները քննարկվում և գեղարվեստականացվում էին առավել սուր:

Եթե գրական այդ ժամանակահատվածը դիտարկենք ժանրային տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ այն ավելի շատ վեպերի ժամանակն էր: Բայց հայ արձակին ամենահարազատ ու բնորոշ ժանրը՝ պատմվածքը, նույնպես որոշակի զարգացումների մեջ էր, և Վանո Սիրադեղյանը եկավ իր նպաստը բերելու հենց այդ ժանրի նորացմանն ու զարգացմանը: Ընդ որում՝ նա իր ստեղծագործական համակրանքն էր հայտնում այն գծին, որ Հրանտ Մաթևոսյանն էր առաջ տանում գրական բազմազանությունների այդ ժամանակաշրջանում:

Բնականաբար, այդ շրջանում ասպարեզ մտած երիտասարդ արձակագիրները ունեին գրական տարբեր նախասիրություններ, և դա ապահովում էր նաև ստեղծագործական բազմազանություն: Բայց ավելի շատ էին ներքին հարազատությունները, որոնք, անկախ նախընտրելի թեմաներից, ձևավորում էին հատկապես կերպարային նախընտրությունների, հոգեվիճակների ընդհանրություններ:

Ընդհանրապես, ինչպես մի առիթով նկատում է գրականագետ Կիմ Աղաբեկյանը, այս շրջանի «արձակը աչքի է ընկնում իրականության և մարդու հոգեբանության մեջ տեղի ունեցող տեղաշարժերի նկատմամբ ունեցած

անմիջական վերաբերմունքով: Կա մի ընդհանուր գիծ, որ հատուկ է այդ տարիներին գրական ասպարեզ իջած գրողներին. դա սևեռուն ուշադրությունն է մարդու ճակատագրի նկատմամբ» [3] : Ասվածը թերևս վերաբերում է հատկապես Վանո Սիրադեղյանին, սակայն դա մի հատկանիշ է, որի դրսևորումները տեսնում ենք նաև Արտաշես Ղահրիյանի, Վրեժ Իսրայելյանի, Վազգեն Սարգսյանի, Ռոլանդ Շառոյանի, Ռաֆայել Նահապետյանի, Պատվական Ղուկասյանի և էլի շատերի արձակում:

Այլ հարց է, որ նրանցից յուրաքանչյուրն այդ հատկանիշը ծառայեցնում է իր գրական նպատակադրումներին: Այս իմաստով կան Վանո Սիրադեղյանին որոշ առումներով «ձայնակից» երիտասարդ արձակագիրներ, և կան արձակագիրներ, որոնք նույն երևույթը գեղարվեստականացնում էին միանգամայն այլ դիրքերից:

Յուրաքանչյուր ճշմարիտ գրող, իհարկե, անդրադառնում է իր բնօրրանին: Բացառություն չէ նաև Սիրադեղյանը, որն ամենայն մանրամասնությամբ զգում է իր երկիրն ու հայրենիքը, նաև այդ երկրին ու հայրենիքին շաղկապված է այնքան, որ կարողանում է կերտել հայրենիքի փիլիսոփայությունը և ընկալումը: Սիրադեղյանի ստեղծագործությունների առանցքում միշտ հայտնվում է գյուղը: Անգամ այն պատմվածքներում, որտեղ տարածություն է ընտրված քաղաքը, միևնույնն է, հերոսները կարծես շնչում են բնությամբ, կապված են նաև գյուղի հետ: Սիրադեղյանի հերոսները օժտված են բացառիկ զգացականությամբ, որը ստիպում է անընդհատ լինել բնության շարժմանը համընթաց:

Վանո Սիրադեղյանի արձակի յուրահատկությունները ձևավորվում են գրողական տարբեր դիրքավորումներով, պատումի ու ոճի անսպասելի խաղարկումներով, կերպարակերտման ոչ ստանդարտ ձևերով: Այդ առումով Սիրադեղյանի արձակում չափազանց կարևոր դեր է խաղում բնությունը:

Ինչպես նկատել ենք, բնությունը Վանո Սիրադեղյանի արձակում սոսկ պատկերման և նկարագրության օբյեկտ չէ: Բնությունը հանդես է գալիս իբրև մարդու իրացման տարածություն, մարդկային զգացողություններին և հոգեբանությանը սերտորեն շաղկապված գոյություն: Շատ հաճախ բնությունը կարծես շունչ է առնում և ձուլվում Սիրադեղյանի հերոսներին՝ դառնալով նրանց մի մասը, ապրելով և շնչելով նրանց հետ զուգընթաց:

Եթե ընդհանրական կերպով դիտարկենք Վանո Սիրադեղյանի արձակը, ապա այն ավելի շատ քաղաքագրական է, բայց իրացված, այսպես ասած, գյուղագրության գրողական տեխնիկայով ու մոտեցումներով: Թերևս այս հատկանիշը Վանո Սիրադեղյանի արձակն ամենաշատն է մոտեցնում-

---

[3] **Աղաբեկյան Կ.,** Արդի հայ արձակի զարգացման միտումները (1960-80-ական թվականներ), Եր., ԵՊՀ հրատ., 1992, էջ 41:

հարաբերում Հրանտ Մաթևոսյանի արձակին՝ միևնույն ժամանակ առավել առարկայաբար ընդգծելով էական տարբերությունները:

Երկուսն էլ պատումը կառուցելիս չափազանց ուշադիր և մանրակրկիտ են մոտենում հերոսների ընտրությանն ու դրանց կերպավորմանը: Սա իրապես չափազանց կարևոր և էական է ոչ միայն կոնկրետ ստեղծագործությունների ուսումնասիրության առումով, այլև նրանց գրողական ձեռագրի, դիտողականության, ինչու ոչ, հենց գրական դավանանքի դիտանկյունից:

Որքան էլ Մաթևոսյանն ու Սիրադեղյանը հանգում են գաղափարական տեսանկյունից չափազանց մոտ, երբեմն գրեթե նույն մտայնություններին, այնուամենայնիվ, այս երկու հեղինակների մոտեցումներն էականորեն տարբեր են հատկապես կերպարակերտման առումով:

Սիրադեղյանը ունի բնության չափազանց ուժեղ զգացողություն, ինչն էլ փոխանցվել է իր հերոսներին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԺԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԿԵՐՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երրորդ գլխում, որը կազմված է երկու ենթագլխից՝ «Ժանրային իրացումները» և «Պատմվածքի և վիպակի սահմանագծին. «Ձեռքդ ետ տար ցավի վրայից»», ուսումնասիրվում են Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները, նորարարությունները և դեռևս չքննված խնդիրները:

Սիրադեղյանի արձակի ժանրային յուրահատկություններն ու ժանրի նուրբ զգացողությունները լավագույնս երևում են «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործության մեջ: Պատահական չէ, որ հստակ տարորոշելի չէ՝ այն պետք է համարել պատմվա՞ծք, թե՞ վիպակ: Ընդ որում՝ այդ անորոշությունը հստակեցնելու ջանքերն էլ բացապարզում են Սիրադեղյանի ժանրազգացողության յուրահատկությունները: Սիրադեղյանը ընտրել է պատմողական ժանրաձև, որպեսզի կարողանա նաև պահպանել իրեն բնորոշ ոճականությունը և, ինչու ոչ, դրսևորել հուզականություն: Ինչպես նկատում են Ուելլեքը և Ուորրենը, «Պատմողական մեթոդի հիմնական խնդիրը հեղինակի վերաբերմունքն է իր ստեղծագործության նկատմամբ»[4]:

Իսկ այս ստեղծագործության մեջ հեղինակի վերաբերմունք ունենալը, ինչ խոսք, ակնհայտ է: Ընդհանրապես, Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը կարելի է բաժանել մի քանի շրջափուլի: Հեղինակն իր առաջին շրջանի ստեղծագործության մեջ տարվում է անհատի խնդիրներով, ստեղծում ժամանակի թելադրանքին համապատասխան հերոսներ՝ այդպիսով վեր

---

[4] **Ուելլեք Ռ., Ուորրեն Օս.**, Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 330:

հանելով ժամանակակից մարդու խնդիրները, որոնք թե՛ կենցաղային են, թե՛ գաղափարական, թե՛ գոյութենական:

Այս խնդիրների արծարծմանն են միտված հեղինակի առաջին պատմվածքներն ու «Կիրակի» ժողովածուն առհասարակ: Պետք է նկատենք, որ Սիրադեղյանի երկրորդ ժողովածուն՝ «Ծանր լույսը», նույնպես աչքի է ընկնում այս հատկանիշներով՝ խոշոր հաշվով դառնալով հեղինակի՝ մինչ 1987 թվականը գրված և հրապարակված պատմվածքների ժողովածու՝ առանց որևէ կոնցեպտուալ մոտեցման: Միակ ժանրային նորությունն այստեղ «Ծանր լույս» վիպակն է:

Բոլորովին այլ պատկեր է «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ժողովածուում, որը կարծես հեղինակի կողմից կազմված ստեղծագործությունների ընտրանի լինի՝ միևնույն ժամանակ կրելով նաև ողջ ստեղծագործության թվացյալ ժողովածուի տեսք, քանի որ հեղինակը իր գրեթե բոլոր ստեղծագործությունները ներառել է գրքում: Ժողովածուն առաջ է բերում հեղինակին դիտելու նոր հայեցակետ՝ առավել խորն ու փիլիսոփայական մի քանի ստեղծագործությունների առաջին հրապարակումով, որոնցից հատկապես էական է համանուն «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը:

Այն, որ սա հեղինակի հերթական պատմվածքը չէ, ակնհայտ է դառնում հենց ծավալից և ժանրային առանձնահատկություններից: Երկրորդ հայացքից սա իրապես տարբերվող ստեղծագործություն է նաև բովանդակային առումով: Այն իր մեջ կրում է հայրենիքի ընկալման մի ողջ համակարգ: Մենք նկատել ենք, թե ինչպիսի ուշադրության է արժանացնում Սիրադեղյանը իր միջավայրին՝ լինի գյուղ, թե քաղաք, ինչպես է վերաբերվում հայրենի բնությանը: «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» գրվածքը հեղինակի թերևս միակ ստեղծագործությունն է, որն իր համար տարածություն է ընտրում արդեն տեղայնացված Հայաստանը, ո՛չ Հայաստանի բնությունը, ո՛չ մարդիկ, ո՛չ հայկական գյուղն ու քաղաքը, այլ հենց Հայաստանը՝ արդեն հստակորեն տրվող տարածքային բնորոշումներով՝ քաղաքներ, գյուղեր, լեռներ, գետեր: Հեղինակը պատմվածքի ողջ ընթացքում պատմական էքսկուրս է անում՝ հերոսի հետ շրջագայելով Հայաստանի տարբեր վայրերով, այդ վայրերի մասին պատմական փաստեր բերելով և հայ ժողովրդի պատմության տարբեր իրադարձություններ հիշատակելով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ ԻԲՐԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Երրորդ գլխում ուսումնասիրվում են Վանո Սիրադեղյանի ստեղծագործության լեզվական առանձնահատկությունները՝ հասկանալու, թե

լեզվական ինչ հնարանքների է դիմում հեղինակը, ինչ կերպով է կառուցում տեքստը, լեզվի որ շերտերն է օգտագործում: Վանո Սիրադեղյանի արձակում կերպարակերտման և միջավայրի վերստեղծման տեսանկյունից չափազանց կարևոր են գրողի կիրառած լեզվական միջոցները: Խոսքը վերաբերում է հատկապես բառապաշարին և դրա տարբեր շերտերի կիրառմանը:

Գեղարվեստական գրականության լեզվի և ոճի խնդիրներին ուշադրություն են դարձրել շատ լեզվաբաններ, որոնք, իհարկե, չեն շրջանցել նաև 20-րդ դարի հայ արձակը, առավել ևս, դարի երկրորդ կեսը՝ հաշվի առնելով, թե ինչպիսի հետաքրքրական արձակագիրներ են գործել հենց այդ ժամանակային փուլում՝ Հրանտ Մաթևոսյան, Աղասի Այվազյան, Վանո Սիրադեղյան… Այս ցանկը կարելի է դեռ երկար շարունակել: Եղել են նաև ուսումնասիրություններ արդեն դասական դարձած հեղինակների ՝ Աբովյանի, Շիրվանզադեի, Իսահակյանի և այլոց ստեղծագործությունների վերաբերյալ:

Գրականության այս շրջափուլը, ըստ էության, սկսվում է 60-ական թվականներից, երբ առաջ եկավ ստեղծագործողների մի նոր սերունդ՝ այլևս միայն իրեն բնորոշ հույզերի, պատկերների նկարագրական ձևերով, թեմատիկ նախընտրություններով, ինչը, ինքնըստինքյան հասկանալի է, չէր կարող իր դրոշմը չթողնել գրական լեզվի վրա:

Մեր նպատակն է եղել ուսումնասիրել այդ սերնդի համեմատաբար կրտսեր ներկայացուցիչներից մեկի՝ ժամանակակից հայ գրականության, եթե այսպես ասենք, նախ խորհրդային, ապա անկախության շրջանի ամենաականավոր արձակագիրներից մեկի՝ Վանո Սիրադեղյանի արձակի լեզուն և ոճը, որը բավական հարուստ ու բազմաշերտ է:

Գեղարվեստական գրականության որևէ նմուշի արժեքայնությանը անդրադառնալիս անհրաժեշտ է նաև տվյալ ստեղծագործության լեզվին անդրադարձ կատարելը, որովհետև ստեղծագործության վերջնական արժեքը ձևավորվում է երեք հիմնական բաղադրիչների արդյունքից՝ լեզու, բովանդակություն, հերոս:

Գրողի տաղանդի հիմնական ցուցիչներից են նրա գրական լեզուն, նկարագրական հմտություններն ու ունակությունները, հերոսների խոսքի բնականությունը, համապատասխանությունը տվյալ պատկերին և իրավիճակին: Ըստ էության, այս գլխում ուսումնասիրվել են լեզվական երեք շերտերը, որպեսզի գրողի լեզվին տրվի ընդհանուր գնահատական:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Հինգերորդ գլխում, որը կազմված է երկու ենթագլխից՝ «Ղարաբաղյան հարցը Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ» և «Գաղափարաբանական հարցադրումները Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ», ուսումնասիրվում է հեղինակի

հրապարակախոսությունը, առանձնացվում են հրապարակախոսության հիմնական թեմատիկ ճյուղերը, գնահատվում են Սիրադեղյանի հրապարակախոսական ստեղծագործությունների իրացումները:

Վանո Սիրադեղյանի ստեղծագործության անբաժանելի ու կարևոր մասերից մեկը նրա հրապարակախոսությունն է: Անշուշտ, դժվար չէ նրա շատ պատմվածքներում նույնպես որսալ հրապարակախոսական շերտեր, սակայն բուն հրապարակախոսությամբ Սիրադեղյանը սկսեց հանդես գալ համեմատաբար ավելի ուշ:

Սիրադեղյանի հրապարակախոսական ժառանգությունը հատկանշվում է ոչ միայն իր ժամանակի հասարակական, քաղաքական խնդիրներին հատկացված հրատապ արձագանքով ու վերլուծությամբ, այլև յուրահատուկ ոճով ու պատկերավորությամբ: Դա իսկապես գրողի հրապարակախոսություն է, և պատահական չէ, որ Սիրադեղյանի բազմաթիվ հոդվածներ, եթե զանց առնենք թեմաներն ու գաղափարական հարցադրումները, կարելի է վերլուծել նույն այն օրինաչափությունների դիտանկյունից, որով վերլուծելի են նրա պատմվածքները:

Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ քննարկված հարցերը բազմաթիվ են, սակայն որոշ հատույթներ նրա մշտական սևեռակետում են և բարձրաձայնում են չափազանց կարևոր խնդիրներ: Ընդ որում՝ դրանցում արված ընդհանրական դատողություններն ու դիտարկումները ոչ միայն արդիական են, այլև հարստացնում ու ինչ-որ առումով վերաձևում են հայ գաղափարաբանական միտքը:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ չափազանց մեծ տեղ է զբաղեցնում ղարաբաղյան հարցի արտացոլումը, որը ըստ էության նրա ողջ հրապարակախոսության մեկնակետն է: Սա նաև չափազանց հատկանշական է, քանի որ Սիրադեղյանը նաև եղել է Ղարաբաղյան շարժման առաջնորդներից մեկը՝ ունենալով էական և չափազանց կարևոր դեր Հայաստանի անկախացման և պետականաստեղծման գործում: Նա «Ղարաբաղ կոմիտեի» անդամ էր, և այս հարցը, բնական է, որ չափազանց շատ է հուզում Սիրադեղյանին: Նաև պետք է նշել, որ, ըստ էության, հենց ղարաբաղյան հարցի շուրջ ունեցած տարաձայնություններն էին այդ թվականներին ՀՀ իշխանությունների հրաժարականների և իշխանությունից հեռանալու ամենաէական պատճառը:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը հայ իրականության մեջ բացառիկ է իր բովանդակային խորությամբ և մեկնաբանությունների սրությամբ: Սիրադեղյանի հրապարակախոսական ու վերլուծական աշխատանքները հիմնված են ոչ միայն ընթացիկ իրադարձությունների արձանագրման, այլև դրանց պատճառահետևանքային կապերի վերհանման վրա: Սիրադեղյանի համար հրապարակախոսությունը զուտ տեղեկատվություն տրամադրելու միջոց չէր: Այն քննադատական մտածողության խթան էր, մի տեսակ զենք, որը ուղղված էր թե՛ ներքին քաղաքական թերություններին, թե՛ արտաքին աշխարհում Հայաստանի դիրքերի խոցելիությանը:

Ղարաբաղյան հակամարտության մասին Սիրադեղյանը գրել է մի ժամանակաշրջանում, երբ խնդիրը դարձել էր ոչ միայն հայության գոյապայքարի առանցքային հարցերից մեկը, այլև միջազգային հանրության ուշադրության կիզակետը: Հակամարտությունը նրա հրապարակախոսության առանցքային թեմաներից էր, ինչը բնութագրում է թե՛ խնդրի ծանրությունը, թե՛ ազգային հարցերի նկատմամբ Սիրադեղյանի խիստ պատասխանատու մոտեցումը:

Ղարաբաղյան հակամարտության մասին խոսելիս Սիրադեղյանը առաջին հերթին անդրադառնում էր դրա պատմական հիմքերին: Նրա մոտեցումը տարբերվում էր ավանդական հրապարակախոսության և պաշտոնական դիրքորոշումների կաղապարներից, քանի որ նա հաճախ էր ընդգծում, թե ինչպես են պատմական իրադարձությունները շահագործվել քաղաքական տարբեր ուժերի կողմից: Նրա խոսքում հաճախ ենք հանդիպում այն համոզմունքին, որ հակամարտությունն ունի ոչ միայն ազգային կամ կրոնական, այլև աշխարհաքաղաքական երանգներ:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ ուշագրավն այն է, որ նա հաճախ ոչ միայն բանավիճում է ժամանակի այսպես կոչված ընթացիկ տեսակետների հետ, այլև փորձում է դրանց հիմքերն ու պատճառահետևանքային կապերը դիտել գրական, երբեմն նույնիսկ մշակութաբանական լայն համտեքստերի մեջ: Շատ հաճախ սա բերում է անցյալի տեքստերի, գաղափարական հարցադրումների, ժամանակին չպատասխանված հարցերի վերարծարծման, որոնք ուրվագծում են քննարկվող խնդրի անցած ճանապարհը: Սա է պատճառը, որ Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ պարբերաբար հիշատակվում են Եղիշե Չարենցը, Մովսես Խորենացին, Խաչատուր Աբովյանը, Հրանտ Մաթևոսյանը և ուրիշներ, ընդ որում, առավելապես նրանք, ովքեր իրենց տարբեր ստեղծագործություններում ընդունվածից տարբերվող հայացքով են դիտարկել հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանները:

Եթե խնդիրը դիտարկենք 1930-ականներին (նաև հետագայում) Չարենցի ստեղծագործության որոշ հատվածին տրված «ազգային նիհիլիզմ» ձևակերպման տիրույթում, ապա պետք է նկատենք, որ Վանո Սիրադեղյանը նույնպես այդ գծի հետևորդ է: Ընդ որում, խնդիրը չի վերաբերում սոսկ չարենցյան որոշ ձևակերպումների կամ գաղափարական թիրախավորումների առկայությանը նրա հրապարակախոսության մեջ: Հարցն այստեղ վերաբերում է գաղափարական թիրախին, և այս առումով Վանո Սիրադեղյանը նաև չարենցյան գծի ուղղակի շարունակողն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով Վանո Սիրադեղյանի արձակը, հեղինակի գրական մուտքն ու արձագանքները, թեմատիկ նախընտրությունները, նրա կողմից

ստեղծված ժանրային իրացումներն ու պատկերակերտման համակարգը, լեզուն և ոճը՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Վանո Սիրադեղյանը հայ գրականության ժամանակակից փուլի գլխավոր ներկայացուցիչներից է, որը պայմանավորում է հայ գրականության հատկապես 1980-ական թվականների ընթացքը:
2. Սիրադեղյանն իր առաջին գրական փորձերը կատարել է բանաստեղծության ժանրում, որն ի ցույց է դրել նրա առավել մեծ հավակնությունները արձակի տարածության համար: Դա զգացել է նաև հեղինակը՝ անցում կատարելով դեպի փոքր արձակի ժանրերը:
3. Հեղինակի գրական մուտքն արժանացել է տարաբնույթ արձագանքների և մեկնաբանությունների: Ժամանակի գրաքննադատությունը կարողացել է նկատել Սիրադեղյանին: Նրա ստեղծագործության մասին գրված գրեթե բոլոր հոդվածներն ու գրախոսությունները արժևորում են հեղինակի ստեղծագործությունը:
4. Հեղինակի առաջին գիրքը՝ «Կիրակին», ըստ էության հստակ կառույց ունեցող ժողովածու է, որտեղ հեղինակն իր ուշադրությունն ու սևեռումն է հատկացնում հայ մարդու մտածողության, նրա հոգեբանության ընկալման ու խնդիրների վերհանման հարցերին:
5. Վանո Սիրադեղյանը 1970-80-ական թվականների հայ գրականության համատեքստում առանձնանում է իր յուրահատուկ ոճով և թեմատիկ նախընտրություններով՝ այսպիսով դառնալով հայ ռեալիստական արձակի հաջորդ մեծ ներկայացուցիչը Հրանտ Մաթևոսյանից հետո:
6. Սիրադեղյանը որպես իր ստեղծագործության տարածություն հաճախ ընտրում է գյուղական միջավայրը, բայց չի դառնում գյուղագիր: Նրա նկարագրությունների առարկան շարունակում է մնալ մարդը: Հենց սա է, որ նրա արձակին տալիս է առավել վերլուծական, մտածողական և հոգեբանական շերտեր:
7. Վանո Սիրադեղյանը իր արձակում չափազանց մեծ տեղ է հատկացնում բնությանը: Հեղինակն ունի բնության բարձր զգացողություն, ինչով և օժտում է իր հերոսներին: Սակայն բնությունը Սիրադեղյանի արձակում ոչ թե նկարագրվող օբյեկտ է, այլ հերոսների հետ հարաբերության մեջ մտնող սուբյեկտ: Բնությունը պայմանավորում է այդ հերոսների ապրումներն ու տրամադրությունները, իսկ հերոսներն էլ իրենց հերթին ձուլվում են այդ բնությանը և դառնում նրա մի մասը:
8. Վանո Սիրադեղյանը հանդես է գալիս ժանրային նորարարություններով, որոնք էլ պատճառ են դառնում նրա ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունների ձևավորման համար: Սիրադեղյանի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը նոր վիպակի իրացման օրինակ է, որտեղ

հեղինակը ի հայտ է բերում պատմական դեպքերի գեղարվեստականացման նոր հայեցակետ :

9. Վանո Սիրադեղյանի ստեղծագործություններն օժտված են բարձր զգացականությամբ և պատկերի ճշգրտությամբ: Սիրադեղյանին նման մակարդակի արձակ ստեղծելու հարցում օգնել են լեզվական տարբեր իրողություններ:
10. Հեղինակն իր ստեղծագործություններում օգտագործել է հայերենի բառապաշարի տարբեր շերտեր՝ ժողովրդախոսակցական բառաշերտից մինչև խորհրդային իրականությանը բնորոշ բառեր, որոնցով կարողացել է հնարավորինս ճշգրիտ պատկերել իր ժամանակը:
11. Վանո Սիրադեղյանի արձակը չափազանց պատկերավոր է: Նա մեծ հաջողությամբ օգտագործել է պատկերավորման-արտահայտչական բոլոր միջոցները՝ այդպիսով իր արձակը դարձնելով առավել ոճավոր և տարբերվող:
12. Վանո Սիրադեղյանը թողել է բավականին ծավալուն հրապարակախոսական ժառանգություն, որն ինքնատիպ է, հաճախ՝ գեղարվեստական:
13. Վանո Սիրադեղյանն իր հրապարակախոսության մեջ մեծապես անդրադառնում է ղարաբաղյան հակամարտությանն ու դրան փոխկապակցված գոյաբանական խնդիրներին:
14. Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ առկա են գաղափարաբանական հարցադրումներ, որոնց հիմքով էլ հեղինակը, ըստ էության, առաջնորդվում է իր հրապարակախոսական տեքստերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Հ . Հովակիմյան, Ժանրային իրացման որոշ հարցեր . Վանո Սիրադեղյանի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» ստեղծագործությունը, «Հայագիտական հանդես», Երևան, համար 3-4 (66-67), 2024, էջ 63-73:
2. Հ . Հովակիմյան, Վանո Սիրադեղյանի գրական մուտքն ու արձագանքները, Գիտական Արցախ, Երևան, թիվ 4 (23), 2024, էջ 143-155:
3. H. Hovakimyan, GENERAL OBSERVATIONS ON THE PECULIARITIES OF V. SIRADEGYAN'S PROSE LANGUAGE AND VISUALIZATION TOOLS, "MAIN ISSUES OF PEDAGOGY AND PSYCHOLOGY", Yerevan, Vol. 21 No. 1, 2022, pages 82-89:

4. Հ.Հովակիմյան, 1970-80-ական թվականների հայ արձակի թեմատիկ ուղղվածությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, թիվ 1(673), 2025, էջ 159-168:
5. Հ. Հովակիմյան, Ղարաբաղյան հիմնահարցի արծարծումները Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ, Բանբեր Երևանի համալսարանի, բանասիրություն, Երևան, Vol. 16, No 2 (47), 2025, էջ 164-175:
6. Հ.Հովակիմյան, «Վանո Սիրադեղյանի «Կիրակի» ժողովածուն որպես հեղինակի ստեղծագործական հանգրվան, «Հայագիտական հանդես», Երևան, համար 1 (68), 2025, էջ 108-125:

ОВАННЕС ОВАКИМЯН

ТВОРЧЕСТВО ВАНО СИРАДЕГЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 - «Армянская литература новейшего периода».

Защита диссертации состоится 25-ого июня 2025 г. в 12:00 на заседании специализированного совета литературоведения 012 КВОН РА действующего при Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван, ул. Абовяна 52[a], корпус факультета армянской филологии ЕГУ, 202 аудитория.

Резюме

Актуальность темы. Вано Сирадегян был и остается одним из самых интересных, обсуждаемых и признанных авторов 1970–80-х годов, и, соответственно, его творчество с первых публикаций находилось в центре внимания литературной критики. Однако следует отметить, что изучение его творчества в основном осталось в рамках 1970–80-х годов, с акцентом на ранние произведения, опубликованные в литературной прессе, и первые сборники — «Воскресенье», «Тяжелый свет». Значительная часть творчества Сирадегяна так и не подверглась полноценному литературоведческому анализу.

Следует также отметить, что современный читатель проявляет большой интерес к произведениям Сирадегяна, о чём свидетельствуют издания его сборников в 2000-х годах, регулярные переиздания сборника «Дверь», содержащего всю его художественную прозу, а также периодические воспоминания читателей о его публицистике.

Следовательно, для удовлетворения интереса современного читателя и для облегчения восприятия прозы и публицистики Сирадегяна необходим современный научный анализ, который позволит взглянуть на его прозу,

поэзию и публицистику новым взглядом, тем самым способствуя пониманию литературы 1980-х годов.

Сирадегян делает акцент на «маленьком человеке», его внутренних конфликтах и вопросах, которые зачастую сталкиваются со стеной или получают логичные ответы. А у современного читателя множество вопросов, на которые он пытается найти ответы в этой литературе.

Цели и задачи исследования.Цель исследования — изучить художественную прозу и публицистику Вано Сирадегяна, одного из талантливейших и самобытных авторов армянской литературы 1970–80-х годов, показать место и значение его творчества в истории армянской литературы.

Некоторые вопросы, затронутые в работе, уже рассматривались ранее, но кратко, в форме намёков, в рамках коротких статей и рецензий, опубликованных в 1980–90-х годах, без глубокого анализа.

Основная задача — показать логику и развитие творчества автора, его героев, внутренние и внешние импульсы, определяющие поведение «маленького человека» — героя его произведений, особенности поведения героев, обусловленные социальными и локальными факторами и т. д.
Исходя из цели исследования, поставлены следующие задачи:

1. Изучить творчество Вано Сирадегяна
2. Проанализировать статьи и работы, посвящённые его творчеству
3. Провести анализ произведений автора с позиции соответствия формы и содержания
4. Охарактеризовать эстетические особенности его произведений и уточнить его место в армянской литературе
5. Проанализировать публицистику автора
6. Исследовать используемые им языковые и стилистические средства и оценить их реализацию

Научная новизна работы. Исследование творчества Сирадегяна началось в 1978 году, когда в печати появились его первые рассказы. Однако это изучение не получило продолжения в последующие десятилетия в глубоком и всестороннем виде. Некоторые частные вопросы были затронуты в отдельных научно-литературных статьях, которые были краткими и сжатыми.

Особо примечательны статьи Азата Егиазаряна, Завена Аветисяна, Феликса Мелояна, Петроса Демирчяна и других, к которым в исследовании обращено внимание.

Работа представляет собой первое глубокое исследование всего литературного наследия Вано Сирадегяна, которое ранее не подвергалось системному научному анализу, за исключением некоторых кратких статей 1980–90-х годов. В настоящем исследовании художественное и публицистическое наследие Сирадегяна анализируется в полном объёме. Расширяются ранее

отмеченные критикой черты, демонстрируется художественное мышление автора во всех возможных аспектах и деталях.

Методология диссертации. Тематика диссертации позволяет применить аналитический, сравнительный и исторический методы исследования.

Структура работы. Работа состоит из введения, пяти глав, заключения и списка использованной литературы.

В введении обоснован выбор темы, показана степень её разработанности, раскрыта актуальность и практическая значимость, выделены цели и задачи диссертации, а также её теоретико-методологическая база.

Первая глава диссертации озаглавлена *«Литературный дебют Вано Сирадегяна и его восприятие»*. В отдельных подразделах рассматриваются поэтические опыты автора, его первые рассказы, опубликованные в прессе, а также сборник рассказов *«Воскресенье»* как укрепление литературного дебюта и первая стадия его творческого пути.

Вторая глава озаглавлена *«Деревня и природа как литературное пространство»*. В этой главе рассказы Вано Сирадегяна анализируются в контексте тематических тенденций армянской прозы 1970–1980-х годов. В отдельных подразделах также представлены и проанализированы деревня и её жители, природа и человеческая психология.

Третья глава называется *«Особенности жанровой реализации и построения образов»*. Жанровые поиски автора рассматриваются в пограничной области между рассказом и повестью.

Четвёртая глава озаглавлена *«Язык и стиль прозы Сирадегяна как средство воссоздания времени и создания образов»*. Здесь анализируются принципы языкового мышления Вано Сирадегяна и особенности построения образов.

Пятая глава — *«Публицистика Вано Сирадегяна»* — посвящена идеям и художественному анализу публицистических статей, посвящённых Карабахскому вопросу и другим национально-общественным проблемам.

В разделе заключения нами представлены такие выводы, к которым мы пришли в результате проведенного исследования.

Диссертация завершается списком использованной литературы.

HOVHANNES HOVAKIMYAN

THE WORKS OF VANO SIRADEGHYAN

Dissertation to obtain the degree of a Candidate of Philology. Field of specialization: 10. 01.02 - Armenian Literature of the New Period.

The defense of the dissertation will take place on June 25, 2025 at 12:00 p.m., at the HESC Specialized Counsil 012 of "Literature Studies" at Yerevan State University (YSU).

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

Summary

Relevance of the Topic: Vano Siradeghyan was and remains one of the most interesting, discussed, and recognized authors of the 1970s–80s, and thus, his works have been the focus of literary criticism since his earliest publications. However, it should be noted that the study of the author's work has largely remained within the context of the 1970s–80s, primarily presenting his early works published in literary journals and his first collections, "Sunday" and "Heavy Light." As a result, a substantial portion of Siradeghyan's oeuvre has remained outside of proper literary analysis.

It is also worth noting that contemporary readers are highly interested in Siradeghyan's work, as evidenced by the publication of his collections in the 2000s, the repeated republication of his complete fiction collection "The Door", and the continued public interest in his journalistic writings. Therefore, in order to satisfy the interest of contemporary readers and to make Siradeghyan's prose and journalism more accessible, a modern analysis is needed—one that will allow a fresh perspective on his fiction, poetry, and journalistic works, thus connecting with the literature of the 1980s.

Siradeghyan focuses on the "little man," his internal struggles and questions, which often meet a wall of silence, or at times, receive logical answers. Contemporary readers have many questions themselves, and they try to find answers within Siradeghyan's literature.

Goals and objectives of the study. The objective of this study is to analyze the artistic prose and journalistic writings of Vano Siradeghyan, one of the most talented and original authors of Armenian literature of the 1970s–80s, and to show the place and significance of his work within the broader context of Armenian literary history. Some of the issues raised in this dissertation have been previously touched upon, though only briefly and often indirectly, primarily in short articles and reviews written in the 1980s–90s, without any in-depth analysis.

The main goal of this dissertation is to highlight the logic and development of the author's work, focusing on his characters and the internal and external stimuli that shape the behavior and actions of the "little man"—the central figure of Siradeghyan's works, including the social and local factors influencing this behavior.

Based on the research goal, the following objectives have been set:

1. To study the works of Vano Siradeghyan
2. To analyze the articles and works written about the author's literature
3. To examine the author's writing based on the principle of form-content coherence
4. To describe the aesthetic characteristics of his works and clarify his place within the canon of Armenian literature
5. To analyze the author's journalistic work
6. To explore the linguistic-stylistic devices used by the author and assess their effectiveness

Scientific novelty of the work. Research on Siradeghyan's literature began in 1978, when his first stories appeared in the press. However, this research did not continue into the following decades in a deep or comprehensive manner. Some minor issues related to the topic have been addressed in brief scientific-literary articles.

Noteworthy are the articles by Azat Yeghiazaryan, Zaven Avetisyan, Felix Meloyan, and Petros Demirchyan, among others, which are referenced in this study.

This work is the first in-depth analysis of Vano Siradeghyan's entire literary legacy, which has not previously received a comprehensive academic approach beyond a few short articles published in the 1980s–90s. In this study, Siradeghyan's artistic and journalistic heritage is analyzed in its entirety for the first time. The individual features previously noted by critics are expanded upon, and the author's artistic thinking is revealed in all its aspects and details.

Dissertation methodology. The thematic scope of the dissertation allows for the use of analytical, comparative, and historical methods.

Paper structure. The dissertation consists of an introduction, five chapters, a conclusion, and a list of references.

The introduction justifies the choice of topic, presents the degree of existing research, outlines the relevance and practical significance, and sets out the objectives, research questions, and theoretical-methodological foundations.

The first chapter, titled "Vano Siradeghyan's Literary Debut and Its Reception," examines the author's poetic experiments, his first short stories published in the press, and the short story collection "Sunday" as a consolidation of his literary entry and the first stage of his creative path.

The second chapter, "The Village and Nature as Literary Space," analyzes Siradeghyan's short stories within the thematic trends of Armenian prose of the

1970s–1980s. In separate subchapters, the village and its people, nature, and human psychology are examined.

The third chapter, "Peculiarities of Genre Realization and Character Construction," explores the author's genre experiments in the liminal space between the short story and the novella.

The fourth chapter, "The Language and Style of Siradeghyan's Prose as a Means of Reconstructing Time and Shaping Characters," analyzes the principles underlying Siradeghyan's linguistic thinking and the peculiarities of his character construction.

The fifth chapter, titled "Vano Siradeghyan's Publicistic Writing," is dedicated to the ideas and artistic analysis of the author's publicistic articles that address the Karabakh issue and other national and social concerns.

The "Conclusions" section summarizes the key findings of the study.

The dissertation ends with a **List of References.**